Դիտորդի վարքագծի կանոններ

Ես՝ _____ ս

հանդիսանալով «Գյումրու Առաջընթաց» Քաղաքացիական Հասարակության Զարգացման Կենտրոն» հասարակական կազմակերպության դիտորդ՝ պարտավորվում եմ՝

-Ներկայանալ ընտրական հանձնաժողովների նախագահներին, գրանցվել և տեսանելիորեն կրել դիտորդի վկայականը

-Հարգել ՀՀ գործող օրենսդրությունը

-Լինել անկուսակցական

-Չլինել կողմնակալ և դիտորդություն իրականացնելիս չառաջնորդվել քաղաքական հայացքներով

-Հագուստի կամ ունեցած պարագաների վրա որևէ քաղաքական ուժի խորհրդանիշ չկրել

-Լինել հարգալից ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների հանդեպ

-Չհայտնել անձնական տվյալներ

-Դիտարկման ընթացքում վիճաբանության մեջ չմտնել և ցուցումներ չտալ ընտրական գործընթացի որևէ մասնակցի

-Չխանգարել նախընտրական գործընթացներին և չխոչընդոտել ընտրական որևէ փուլի աշխատանքներին։

-Ընտրական հանձնաժողովի անդամներից, վստահված անձանցից և ընտրողներից չընդունել որևէ բան, ինչը կարող է ազդել դիտարկողի անկախության և ազատության վրա կամ մեկնաբանվել որպես այդպիսին

-Առանց համակարգողին տեղեկացնելու չլքել դիտարկման հանձնարարված տարածքը

-Դիտարկումն իրականացնել թափանցիկ կերպով

-Արձանագրված խախտումների վերաբերյալ ստացված տվյալները չփոխանցել երրորդ անձանց

-Հարցազրույցներ տալ միայն համակարգողի թույլտվությամբ

-Չօգնել որևէ ընտրողի, բացառությամբ կյանքի կամ առողջության համար անհետաձգելի օգնություն ցուցաբերելու հնարավոր դեպքից

-Համագործակցել գործընկեր Անկախ դիտորդի և Դաշինքի շրջիկ դիտորդների հետ

-Անհրաժեշտության և փոխադարձ համաձայնության դեպքում համագործակցել այլ, բայց անկողմնակալ դիտորդների հետ

-Ոստիկանության ծառայողներին դիմել միայն տեղամասային կենտրոնից դուրս եղած խախտումների առնչությամբ և միայն առաքելության իրավաբանի հետ խորհրդակցելով

-Աջակցության կամ խորհրդատվության համար դիմել առաքելության իրավաբանին

-Դիտորդը պարտավոր է մասնակցել «Գյումրու առաջընթաց» քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն հասարակական կազմակերպության կողմից անցկացվող ընտրական օրենսդրության վերաբերյալ դասընթացներին, կողմնորոշիչ և այլ հանդիպումներին։

-Քվեարկության ողջ օրը դիտորդը պետք է գտնվի քվեարկության սենյակում և հետևի քվեարկության գործընթացին, մինչև տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփումն ու արձանագրության կազմումը։

-Քվեարկության կարգի հետ կապված հարցերով, դիտողություններով և առաջարկություններով դիտորդն իրավունք ունի դիմել միայն տեղամասային հանձնաժողովի նախագահին։

-Անվտանգության հետ կապված խնդիրներ ծագելու դեպքում դիտորդն այդ մասին պետք է անմիջապես տեղեկացնի «Գյումրու առաջընթաց» քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն հասարակական կազմակերպության համակարգողին։

-Դիտորդական առաքելության ողջ ընթացքում դիտորդը պարտավոր է ցուցաբերել բարձր մասնագիտական և անձնական անթերի վաքագիծ։

-Հասկանալ, որ այս վարքականոնի որևէ գիտակցված խախտում վարկաբեկում է ոչ միայն իրեն, այլև ընտրությունների դիտարկման առաքելությունն ամբողջությամբ։

-Տեղեկացված եմ, որ սույն վարքագծի կանոնները խախտելու համար վճարը չեմ ստանա։

Դիտորդ՝ _____ _____

ստորագրություն Անուն, ազգանուն